ՎՐԱՍՏԱՆ

«ՖՐԱՆՏԱՆՈ» (ՆԱԺԱՐՈՏՅԵԼՈՎ) ԹԵՐԹԸ ԼՈՒՅՍ Է ՏԵՍՆՈՒՄ 1920 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻՑ № 39 - 40 (16128) ՇԱԲԱԹ, 25 ՄԱՅԻՍԻ 2013 Թ. ԳԻՆԸ՝ 25 ԹԵԹՐԻ

ՄԱՅԻՍԻ 26-Ը ՎՐԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

ՀՈՒՅՍԻ ԵՎ ՀԱՄՈԶՎԱԾՈՒԹՅԱՆ ՏԱՐԵԼԻՑ

Ավելի քան մեկդարյա ընդմիջումից հետո, 1918 թվականի մայիսյան այդ օրը Վրաստանը դարձավ անկախ պետություն: Իրականացվեց սերունդների երազանքը: Սակայն, այն ժամանակվա անկախ Վրաստանին պատմությունը չէր շնորհել երկար տարիների կյանք: Այդ երազանքի վերջնական իրականացման համար անհրաժեշտ էր անցնել 72 երկար ու ծիգ տարիներ, զգալ ապրիլի 9-ի կորստյան ցավը, դառնալ եղբայրասպան պատերազմի վկան, պարտվել, սակայն երբեք չհաշտվել պարտության եւ երկրի մասնատման գաղափարի հետ: Եվ այսօր, պետական նոր անկախության 21-րդ տարում, նշելով անկախության վերականգնման 105-ամյա տարելիցի օրը, երկիրը հույսով, վստահությամբ ու համոզվածությամբ է նայում ապագային, վաղվա օրվան: Հույսով, քանի որ երկրում վերջին ժամանակներում իրականացված փոփոխությունները, միջազգային հանրության շարքում Վրաստանի նշանակության ընդգծումն ու համընդհանուր օժանդակությունը, տնտեսական առաջընթացը, ժողովրդավարության սկզբունքների ներդրմանն ուղղված կոնկրետ քայլերը, լուրջ նախադրյալներ են ստեղծել իրական բարեկեցության հասնելու համար: Եվ համոզվածությամբ, որ մայիսի 26-ը կդառնա Վրաստան երկրի տարածքային ամբողջականության խորհրդանիշը, քանի որ չի կարող լինել այլ կերպ, քանի որ այդ է պատմության ու նախախնամության պահանջը:

ՄԱՅԻՍԻ 28-Ը ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԿԱՆԳՆՄԱՆ ՕՐՆ Է

ՊԱՏՄԱԿԱՆ ՕՐԻՆԱՉԱՓՈՒԹՅԱՆ ԱՐՏԱՀԱՅՏՈՒԹՅՈՒՆ

Հայ ժողովրդի պատմությունը, իրականում լի է զարմանալի զուգադիպություններով:

Պատմության քմահաճ դիցուհին, ըստ երեւույթին, նախօրոք էր ծրագրել շուրջ վեց հարյուրամյակ առաջ պետական անկախությունը կորցրած երկրի պետականության վերականգնման օրը՝ մայիսի 28-ը, պսակել Սարդարապատի հերոսամարտով: Հաղթեցինք, անկախացանք: Անկախության երեք տարիների ամեն օրը պսակվեց յուրատեսակ «սարդարապատներով»՝ փոքր ազգով կռվեցինք վիթխարի կայսրության դեմ՝ ազգ լինելու եւ ազգ մնալու իրավունքի համար: Եվ հաղթեցինք... այլ ճանապարհ չունեինք: Հաղթեցինք, սակայն հետո, ժամանակավորապես նահանջեցինք, որպեսզի յոթ տասնյակ տարի անց, անցնելով Սումգայիթ, Բաքու, ավերիչ երկրաշարժ, կրկին վերածնվենք դարաբաղյան կռիվներով, Շուշիի ու Մարտակերտի հերոսամարտերով: Եվ կրկին հաղթեցինք, քանի որ կրկին նահանջելու տեղ չունեինք, իրավունք չունեինք, որովհետեւ միայն այդ ձեւով ինքներս մեզ

եւ ողջ աշխարհին ապացուցեցինք պատմական ազգ լինելու, քաղաքակրթության կենսական հատվածը լինելու մեր օրինական իրավունքը:

Պատմական քմահաճույքներից բացի, բարեբախտաբար, կա նաեւ երկաթե օրինաչափություն, Հայաստանը դարձավ անկախ, որովհետեւ դա էր հայ ժողովրդի կամքն ու մեծ ցանկությունը:

ՏԱՐԵԼԻՑ

ՆՇՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

Մայիսի 19-ին Վրաստանում նշվեց ոստիկանության օրը: Ճիշտ է, Վրաստանում ոստիկանության օրը նշվում է մայիսի 6-ին, սակայն, ինչպես պարզաբանել են ՆԳՆ-ից, այն կապակցությամբ, որ այդ օրը համընկավ Սուրբ Զատկի հետ, տոնակատարությունը փոխադրվել էր մայիսի 19-ը:

Ոստիկաններին պրոֆեսիոնալ օրվա առթիվ Վրաստանի վարչապետի, երկրի կառավարության անդամների եւ խորհրդարանականների հետ միասին շնորհավո-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՆԿԱԽ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ՉՈՒՆԻ

Ինչպես արդեն հաղորդել ենք, մայիսի 17-ին Թբիլիսիի կենտրոնում հոգեւորականների ու հազարավոր քաղաքացիների ջանքերով ձախողվեց հոմոֆոբիայի դեմ պայքարի օրվա նշանավորման նպատակով ոչ ավանդական սեռական կողմնորոշման իրավունքներիպաշտպան կողմնակիցների ակցիան: Ակցիայի կողմնակիցների ու ընդդիմադիրների միջեւ տեղի ունեցան բախումներ, որոնց արդյունքում մոտ երկու տասնյակ մարդիկ մարմնական վնասվածքներ ստացան, այդ թվում՝ նաեւ ոստիկաններ: Վրաստանի ՆԳ նախարարությունը եւ դատախազությունը սկսել են միջադեպի քննությունը: Տեղի ունեցածի կապակցությամբ արդեն ձերբակալվել է չորս անձնավորություն:

Տեղի ունեցածը տարաբնույթ արձագանքներ առաջացրեց՝ ինչպես երկրի ներսում, այնպես էլ արտասահմանում: Մասնավորապես, **Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին** դատապարտել է այն բռնությունը, որ մայիսի 17-ին տեղ է գտել հոմոֆոբիայի դեմ՝ ուղղափառ ակտիվիստների եւ հոգեւոր անձանց կողմից: Նա խոստացել է, որ մեղավորների հետ «կվարվեն օրենքի համա-

(Շարունակությունը՝ 4-րդ էջում)

ՔՐԵԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԿԱԽԵԹԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

Իմերեթիի տարածաշրջանային դատախազությունը կրկնակաև հարցաքննությունից հետո ձերբակալել է Վրաստանի նախկին վարչապետ, ներկայում «Միասնական ազգային շարժման գլխավոր քարտուղար

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԴԻՎԱՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆ

ՎԱՆՈՒԱՏՈՒՆ ԱՆՎԱՎԵՐ ՉԱՆԱՉԵՑ ԱԲԽԱԶԻԱՅԻ ԱՆԿԱԽՈՒԹՅԱՆ ՉԱՆԱՉՄԱՆ ԻՐ ՈՐՈՇՈՒՄԸ

Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, որը Թաիլանդում մասնակցում է Ասիայի եւ Խաղաղ օվկիանոսի երկրների երկրորդ գագաթաժողովին, այցի շրջանակներում հանդիպումներ է անցկացնում տարբեր երկրների ղեկավարների հետ:



Մասնավորապես Վրաստանի նախագահը հանդիպում ունեցավ Թաիլանդի թագավորության վարչապետ Ինգլուկ Շինավատրայի, Բանգլադեշի վարչապետի, Բիրմայի, Պապուա-Նոր Գվինեայի եւ Իրանի փոխնախագահների հետ: Հանդիպումներին քննարկվել են ինչպես երկկողմ հարաբերությունների խորացման, այնպես էլ Վրաստանի բռնազավթված տարածքների չճանաչման հետ կապված հարցեր:

Ինչպես հայտարարեց Միխեիլ Սաակաշվիլին, Վանուատուի վարչապետն իրեն տեղեկացրել է, որ այդ պետությունը վերանայել է Աբխազիայի անկախության ճանաչման իր որոշումը, եւ պաշտպանում է Վրաստանի տարածքային ամբողջականությունը: «Սա առաջին դեպքն է, երբ Ռուսաստանին միջազգային մակարդակով հասցվեց դիվանագիտական պարտություն: Կգա ժամանակ, երբ Ռուսաստանն ինքը կնահանջի բռնազավթված մեր տարածքների ճանաչումից»,- հայտարարեց Միխեիլ Սաակաշվիլին:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԳՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

Վրաստանի ոստիկանության օրվան նվիրված միջոցառումներին մասնակցության համար, մայիսի 18-20-ին Թբիլիսիում էր գտնվում Հայաստանի ոստիկանության պատվիրակությունը՝ ոստիկանության պետի առաջին տեղակալ, ոստիկա-

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿՄԵԿՆԱՐԿԵՆ ՀՈՒՆԻՍԻ 27-ԻՆ

Ինչպես տեղեկացրին քննությունների ազգային կենտրոնից, միասնական ազգային քննությունները կմեկնարկեն հունիսի 27-ին, վրաց լեզու եւ գրականություն առարկայի քննությամբ:

Քննությունների ժամանակակարգը կհրապարակվի կենտրոնի պաշտոնական կայքում, մայիսի վերջերին, այդ ժամանակ էլ կբաժանվեն քննական թերթիկները:

Այս տարի, ազգային կենտրոնի տեղեկացմամբ, երկրի մասշտաբով կգործի քննական 18 կենտրոն: Քննությունների համար գրանցում է անցել շուրջ 42 հազար դիմորդ, 8 հազարից ավելի դիմորդներ ցանկանում են բարելավել իրենց գրանտը, 9 հազարը հանձնում են մագիստրատուրա: Քննության համար գրանցվել է ավելի քան 25 հազար մանկավարժ: Դիմորդների մեծ մասը, մոտ 30 հազարը, որպես օտար լեզու ընտրել է անգլերենը: 14500

(Շարունակությունը՝ 2-րդ էջում)

ՏԱՐԵԼԻՑ

ՆՇՎԵՑ ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՕՐԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

րեցին Հայաստանի, Ադրբեջանի, Լատվիայի, Բելոռուսի, Ռումինիայի եւ Կատարի ներքին գործերի նախարարները եւ բարձրաստիճանավորները: Ոստիկանության օրվան նվիրված շքերթին խոսքով ելույթ ունեցան Վրաստանի վարչապետ Բիձինա Իվանիշվիլին, ներքին գործերի նախարար Իրակլի Ղարիբաշվիլին: Այդ օրը Վրաստանի ՆԳ նախարարը պարգեւներ հանձնեց նախարարության շուրջ 50 աշխատակցի: Այդ օրը Վրաստանի ներքին գործերի նախարարության ճեմասրահում անցկացված ընդունելությանը ներկաներին ցուցադրվեցին այն նորամուծությունները, որոնք գերատեսչությունում ներդրվել են մի քանի ամսվա ընթացքում: Ներքին գործերի համակարգում իրականացվող բարեփոխումների արդյունքում պարեկային ոստիկանությունը համալրվել է «Շկոդա» մակնիշի նոր մեքենաներով, «Սյուզուկի», «Հոնդա» եւ «Յամահա» մակնիշի մոտոցիկլետներով: Բացի այդ, նորամուծության համաձայն, քաղաքացիները կարող են օգտվել նախարարության նորացված www.police.ge կայք-էջով, գործարկվել է նաեւ նոր թեժ գիծ՝ 126:

ՄՇԱԿՎԵՑ «ՈՍՏԻԿԱՆՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ» ՆՈՐ ՕՐԻՆԱԳԻԾԸ

Վրաստանի ՆԳ նախարարությունն իրազեկել է, որ մշակվել է «Ոստիկանության մասին» նոր օրինագիծ: Այն նախատեսում է արմատավորել ոստիկանության գործունեության նոր համադրույթ:

Գլխավոր նորամուծությունը կլինի ոստիկանության կողմից իրավախախտումների կանխող ֆունկցիայի անջատումը արձագանքելու ֆունկցիայից: Միաժամանակ, օրինագիծը տալիս է մանրամասն պարզաբանումներ կանխման բոլոր միջոցառումների եւ դրանց կատարման իրավական հիմքերի մասին: Բացի դրանից, մշակվել է ոստիկանության էթիկայի կոդեքսը, որը սահմանում է ոստիկանների վարվելակերպի հիմնական սկզբունքները: Ինչպես նշել են գերատեսչությունից, նշյալ նորմերի կատարումը պարտադիր է ինչպես ծառայական պարտականությունների, այնպես էլ՝ ծառայությունից դուրս այլ գործունեություն իրականացնելու ժամանակ:

ՔՐԵԱԿԱՆ

ՁԵՐԲԱԿԱԼՎԵԼ ԵՆ ՆԱԽԿԻՆ ՎԱՐՉԱՊԵՏԸ ԵՎ ԿԱԽԵԹԻԻ ՆԱՀԱՆԳԱՊԵՏԸ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

Վանո Մերաբիշվիլուն:

Ինչպես հարցաքննությունից հետո հայտարարել է դատախազության ներկայացուցիչը, գործը վերաբերում է Մերաբիշվիլու կոռուպցիոն գործունեության երկու էպիզոդին: Նրան մեղադրանքներ են առաջադրվել Վրաստանի Քրեական օրենսգրքի 164 պրիմ, 182 եւ 332 հոդվածներով:

Առաջին էպիզոդը վերաբերում է 2012 թվականին, երբ խորհրդարանական ընտրությունների ընթացքում նա, որպես Վրաստանի վարչապետ, այն ժամանակվա աշխատանքի, առողջապահության եւ սոցիալական պաշտպանության նախարար Զուրաբ Ճիաբերաշվիլու հետ միասին, անօրինականորեն աշխատանքի է ձեւակերպել «Միասնական ազգային շարժման» հազարից ավելի ակտիվիստների, մինչդեռ նրանք զբաղվում էին միայն կուսակցության օգտին քարոզչությամբ եւ դրա համար պետբյուջեից ստացել են 5,2 մլն լարի:

Երկրորդ էպիզոդը վերաբերում է Կվարիաթի գյուղում Մերաբաշվիլու կողմից պերճաշուք ամառանոցի յուրացմանը, որը պատկանում էր «Միջազգային ներդրումային ընկերություն» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությանը: Հետաքննությունն ապացուցել է, որ Մերաբիշվիլին 2009 թվականին ահաբեկման ճանապարհով խլել է այդ ամառանոցը եւ դրանից օգտվել մինչեւ 2013 թվականը:

Մերաբիշվիլու հետ միասին ձերբակալված է նաեւ Կախեթիի տարածաշրջանում Վրաստանի նախագահի լիազոր Զուրաբ Ճիաբերաշվիլին: Ըստ նախնական մեղադրանքների՝ նրանց 7-ից մինչեւ 12 տարվա ազատազրկում է սպառնում:

Դատախազությունը հայտարարել է նաեւ, որ գրեթե ավարտվել է 2012 թվականի մայիսի 26-ի հանրահավաքը ցրելու եւ բանկի աշխատակից Սանդրո Գիրգվլիանու սպանության գործի հետաքննությունը, որոնցում նույնպես ապացուցված է այն ժամանակվա ներքին գործերի նախարար Վանո Մերաբիշվիլու մեղավորությունը:

Վրաստանի «Միասնական ազգային շարժման» գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլու տան խուզարկության ժամանակ խոշոր գումարներ են առգրավվել: Այս տեղեկատվությունը հաստատել է Մերաբիշվիլու փաստաբան Գոգիտա Գաբաիձեն: Նրա խոսքով՝ առգրավված փողերը տարբեր արժույթներով են եղել: Հարկ է նշել, որ իրավակարգի պահապանները խուզարկություն են կատարել նաեւ Կախեթիի նահանգապետ Զուրաբ Ճիաբերաշվիլու տանը: Առգրավվել են Ճիաբերաշվիլու ու նրա դստեր համակարգիչները, ինչպես նաեւ նահանգապետի գիտական աշխատությունները:

Վրաստանի նախկին վարչապետ, Միասնական ազգային շարժման գլխավոր քարտուղար Վանո Մերաբիշվիլուն մայիսի լույս 23-ի գիշերը, Քութաիսիի մեկուսարանից տեղափոխել են Թբիլիսիի թիվ 9 բանտ:

Նախօրյակին, ուշ երեկոյան, դատարանը նրա համար խափանման միջոց է ընտրել երկամսյա բանտային կալանքը:

Ինչ վերաբերում է Կախեթիի նահանգապետ Զուրաբ Ճիաբերաշվիլուն, ապա, նրան դատարանը ազատ է արձակել 20 հազար լարի գրավի դիմաց: Ընդսմին, թե' Վանո Մերաբիշվիլու եւ թե' Զուրաբ Ճիաբերաշվիլու փաստաբանները հայտարարել են, որ դատարանի վերոնշյալ որոշումները բողոքարկվելու են:

ՎՐԱՍՏԱՆ-ՀԱՅԱՍՏԱՆ

ՎՐԱՍՏԱՆԻ ՆԳ ՆԱԽԱՐԱՐԻ ՀԱՆԴԻՊՈՒՄԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՆԳՆ ՊԱՏՎԻՐԱԿՈՒԹՅԱՆ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

նության գեներալ-մայոր Հունան Պողոսյանի գլխավորությամբ:

Այցի շրջանակներում կայացավ Վրաստանի ներքին գործերի նախարար Իրակլի Ղարիբաշվիլու հանդիպումը Հայաստանի պատվիրակության հետ: Հանդիպման ժամանակ Հունան Պողոսյանը, փոխանցելով Հայաստանի ոստիկանության պետ Վլադիմիր Գասպարյանի շնորհավորանքները եւ հրավերը, կարեւորել է երկու հարեւան երկրների իրավապահ մարմինների սերտ համագործակցությունը:

Հանդիպմանը Վրաստանի ՆԳ նախարար Իրակլի Ղարիբաշվիլին եւ Հայաստանի ոստիկանապետի առաջին տեղակալ Հունան Պողոսյանը քննարկել են հանցավորության դեմ պայքարում երկու երկրների գերատեսչությունների համագործակցության առավել ճկուն ձեւեր կիրառելու եւ փոխգործակցության արդյունավետության բարձրացման ուղիները՝ նշելով, որ ընդգրկուն համագործակցության շնորհիվ առավել դյուրին կդառնա հանցաշխարհի մարտահրավերներին դիմագրավելը:



ԱՄՆ

ՏՈՌՆԱԴՈՆ ԳԵՐԱԶԱՆՑԵՑ ԱՏՈՄԱՅԻՆ ՌՈՒՄԲԻՆ

ԱՄՆ-ի Օկլահոմայի նահանգում շուրջ 40 երեխա է զոհվել մայիսի 20-ին մոլեգնած տոռնադոյի հետեւանքով, որի զոհերի ընդհանուր թիվն արդեն 91 է: Ըստ վերջին տվյալների՝ Օկլահոմա-Սիթիում հիվանդանոցներ է տեղափոխվել 145 մարդ:

ԱՄՆ-ի Ազգային օդերեւութաբանական ծառայության տվյալներով՝ քամու արագությունը մրրկասյան ծագարի ներսում կարող էր հասնել ժամում 320 կիլոմետրի: ԱՄՆ-ի Օկլահոմայի նահանգի տարածքում մոլեգնած տոռնադոյից վնասը կազմել է մոտավորապես 2 մլրդ դոլար:

1999 թվականի մայիսին նույն այս շրջանները ենթարկվել էին պատմության մեջ ամենաուժգին տոռնադոյին. դրա ծագարի ներսում քամու արագությունը կազմում էր ժամում 486 կիլոմետր:

Ամերիկյան ԶԼՄ-ները նշում են, որ Օկլահոմայի նահանգում մոլեգնած տոռնադոն ավերիչ ուժով գերազանցել է 1945 թվականին Հիրոսիմայի վրա նետված ատոմային ռումբին:

ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԿԱՏԱՐՎՈՂ ԾԱԽՍԵՐԸ ԿԿՐՃԱՏՎԵՆ

Բարաք Օբամայի վարչակազմը վերանայել է 2014թ. ֆինանսական տարվա պաշտպանական բյուջեի նախագիծը եւ որոշել Աֆղանստանում ամերիկյան զորքերի ռազմական գործողության համար տասը տոկոսով պակաս ծախսել, քան պլանավորվում էր ավելի վաղ: ԱՄՆ-ի նախագահը նամակ է ուղարկել Կոնգրես, որում հայտնել է, թե այդ նպատակով առաջարկում է հատկացնել 79,4 մլրդ դոլար:

Ապրիլին Օբամայի վարչակազմը պաշտպանական բյուջեի նախագիծը օրենսդիրներին ներկայացրել էր ավելի քան 624 մլրդ դոլարի չափով: Այդ գումարից 526,6 միլիարդը նախատեսված էր անմիջականորեն Պենտագոնի կարիքների, 88,5 միլիարդը՝ Աֆղանստանի գործողության, իսկ 9,1 միլիարդը՝ միջուկային սպառազինությունների եւ ավիակիրների ու սուզանավերի ատոմային ռեակտորների հուսալիության ապահովման գծով էներգետիկայի նախարարության ծրագրերի համար:

ԼԻԲԱՆԱՆ ԸՆԴՀԱՐՈՒՄՆԵՐ ՏՐԻՊՈԼԻՈՒՄ

Լիբանանի Տրիպոլի քաղաքում տեղի ունեցած երկպառակտչական փոխհրաձգության զոհ է դարձել 6 մարդ, եւս 40-ը վերքեր են ստացել:

Լիբանանում Սիրիայի նախագահ Բաշար Ասադի կողմնակիցների եւ հակառակորդների միջեւ կատաղի բախումներն սկսվել են անցյալ շաբաթվա վերջին:

Բախումներին մասնակցում են ալավիթներից բաղկացած սիրիամետ Արաբական ժողովրդավարական կուսակցության մարտիկները եւ սուննիական տարբեր խմբավորումների զինված իսլամիստներ, որոնք աջակցում են սիրիական զորքերի դեմ կռվող խռովարարներին: Չնայած մայիսի 21-ին հայտարարված հրադադարին, Լիբանանի հյուսիսային մայրաքաղաքում պահպանվում է վտանգավոր իրադրությունը:

Սուննիները կազմում են քաղաքի բնակչության 80 տոկոսը: Այստեղ բնակվում են նաեւ ալավիթների եւ քրիստոնյաների համայնքները:

ԿՐԹԱԿԱՆ

ՆՈՐԱՄՈՒԾՈՒԹՅՈՒՆՆԵՐ՝ ԿԱՊՎԱԾ ՄԻԱՍՆԱԿԱՆ ԱԶԳԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԵՏ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

դիմորդ որպես քննական առարկա է ընտրել պատմությունը, 11 հազարը՝ աշխարհագրությունը:

Միասնական ազգային քննությունների անցկացման կապակցությամբ մենք դիմեցինք քննությունների ազգային կենտրոնի տնօրեն՝ Մայա Միմինոշվիլուն: Նրա տեղեկատվությամբ ազգային քննությունների կապակցությամբ այս տարի ներդրվել են մի շարք նորամուծություններ: Ի տարբերություն նախորդ տարիների, այս տարի դիմորդները, նախ կհանձնեն ազգային քննությունները, ապա ստացած միավորների քանակությունից ելնելով, կորոշեն, թե որ բուհում եւ ինչ մասնագիտություններով են սովորելու: Միմինոշվիլու տեղեկատվությամբ, տարվա նորամուծությունն է նաեւ այն, որ կրթության եւ գիտության նախարարությունը լրիվությամբ կֆինանսավորի այնպիսին ծյուղերի եւ մասնագիտությունների ուսուցումը, ինչպիսիք են բանասիրությունը, պատմությունը, հնէագիտությունը, փիլիսոփայությունը, կրթությունը, մաթեմատիկան, ֆիզիկան, քիմիան, կենսաբանությունը, նաեւ՝ ինժեներական ֆիզիկան, շինարարությունը, ճարտարապետությունը, էներգետիկան եւ էլեկտրաինժեներիան ու տնտեսագիտությունը, Նշենք, որ 100 տոկոսանոց ֆինանսավորումը վերաբերում է պետական հավաստագրում ունեցող բուհերին:

Ըստ Միմինոշվիլու՝ բոլոր բուհերին տրված է միասնական ազգային քննություններում արգելագծի մեծության սահմանման իրավունք: Նշենք, որ այդ սկզբունքը տարիներ շարունակ ներդրված էր Իվանե Զավախիշվիլու անվան Թբիլիսիի պետական համալսարանում, իսկ այս տարի այդ իրավունքից կօգտվեն նաեւ ազատ համալսարանը եւ բժշկական համալսարանը:

«Բուհերը օգտվում են լրիվ ինքնավարությունից, եւ նրանք իրավասու են ինքնուրույն սահմանելու այն արգելագծի մեծությունը, որի հաղթահարումից հետո դիմորդը կընդունվի բուհ: Մեր կողմից սահմանված 25 տոկոսանոց արգելագիծը խորհրդանշական է: Եթե բուհը գտնում է, որ 22 տոկոսը իրեն ձեռնտու է, ապա նա կարող է սահմանել այդ մակարդակը»,- հայտարարեց Մայա Միմինոշվիլին:

Թ.ԱՐԵՎՅԱՆ

Ճարաթից շաբաթ. Փաստեր եւ իրադարձություններ

ՀԱՂՈՐԴՈՒՄ ԵՆ «ՎՐԱՍՏԱՆԻ» ԵՎ ԼՐԱՏՎԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԹՂԹԱԿԻՑՆԵՐԸ

ԽՈՐՀՐԴԱՐԱՆ

ՎԵՏՈՆ ՀԱՂԹԱՀԱՐՎԵՑ, ՕՐԵՆՔԸ ՄՏԱՎ ՈՒԺԻ ՄԵՋ

Ինչպես արդեն հաղորդել ենք, Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին ստորագրել էր Վրաստանի նախագահի կողմից վետո դրված «Ընդհանուր դատարանների մասին» օրինանախագիծը: Խորհրդարանի ղեկավարի կողմից ստորագրած օրենքը ուժի մեջ մտավ մայիսի 21-ին, իսկ դա նշանակում է, որ առաջիկա մեկ ամսվա ընթացքում արդեն կանցկացվի դատավորների խորհրդաժողովը, որտեղ կընտրվեն արդարադատության գերագույն խորհրդի անդամները:

ԴԱՎԻԹ ՈՒՍՈՒՓԱՇՎԻԼԻՆ ՊԱՏՐԱՍՏ Է ԽՈՐՀՐԴԱՏՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

Վրաստանի խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլին պատրաստ է խորհրդարանական փոքրամասնության հետ սկսել խորհրդատվություններ՝ պետական սահմանի ամբողջ երկայնքով միասնական սահմանային ռեժիմ հաստատելու առիթով:

Խորհրդարանի նիստում Ուսուփաշվիլին հայտարարել է, որ եթե փոքրամասնության բողոքի պատճառը տարբեր սահմանային ռեժիմն է օկուպացված տարածքներում եւ սահմանի մնացած տեղամասերում, ապա ինքը պատրաստ է քննարկելու այդ հարցը:

«Այն, ինչ վերջին օրերին տեղի է ունենում նախագծի քննարկման ժամանակ, այն մտահոգացումները, որ մենք լսում ենք ընդդիմությունից, անձամբ ինձ համար եղել եւ մնում են անհասկանալի: Բոլորս համաձայն ենք, որ սահմանի ապօրինի հատումը եւ մյուս այդպիսի գործողությունները, առանց արձագանքի չմնան: Վարչական տուգանքը նույն պատժամիջոցն է, ինչ-որ մյուս պատժամիջոցները՝ սխալ գործողությունների, օրենքը խախտելու համար: Հետեւաբար, ծառացած չէ այնպիսի հարց, թե սահմանի հատումը դառնում է անպատժելի: Նախագծի տրամաբանությունը հենց այն է, որ այդ տեղամասերում իրոք այլ իրավիճակ է՝ մենք այդ սահմաններն իրոք չենք կարող վերահսկել եւ այդ չընդունել, չտեսնել, չնկատել՝ նշանակում է շարունակել ապրել այն պատրանքների մեջ, ուր տարիներ շարունակ ապրել են մեր ընդդիմախոսները եւ փորձել են դրանց մեջ պահել վրաց ժողովրդին... Ուստի մենք պաշտպանում ենք այդ նախագիծը, միաժամանակ ես պատրաստ եմ խորհրդատվություններ սկսել փոքրամասնության հետ՝ եթե ընդդիմախոսները գտնում են, որ ամբողջ սահմանում պետք է լինի միեւնույն սահմանային ռեժիմը»,- հայտարարեց Դավիթ Ուսուփաշվիլին:

ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԱՖՂԱՆՍՏԱՆՈՒՄ ԱՌԱՔԵԼՈՒԹՅԱՆԸ ՄԱՍՆԱԿՑՈՒԹՅԱՆ ԵՎ «ԲՌՆԱԶԱՎԹՎԱԾ ՏԱՐԱԾՔՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՕՐԵՆՔՆԵՐՈՒՄ

Մայիսի 17-ին Վրաստանի խորհրդարանն ընդունեց փոփոխություններ, ըստ որի Աֆղանստանում, մասնավորապես Քաբուլում տեղակայված վրաց զինվորականների վաշտը ֆրանսիական հրամանատարությունից կանցնի ԱՄՆ ռազմական կոնտինգենտի վերահսկողության ներքո:

Վրաստանի պաշտպանության նախարարության հայտարարությամբ սույն փոփոխությունը պայմանավորված է ֆրանսիական կոնտինգենտի տեղափոխմամբ, եւ այն չի ավելացնի Աֆղանստանում ծառայող վրաց զինվորականների թվաքանակը:

Մայիսի 17-ին տեղի ունեցած լիագումար նիստում Վրաստանի խորհրդարանը չորրորդ փորձից հետո կարողացավ առաջին ընթերցմամբ ընդունել «Բռնազավթված տարածքների մասին» օրենքի փոփոխությունները, որոնք նախատեսում են պատժամիջոցների թուլացում այն անձանց համար, ովքեր շրջանցելով պաշտոնական վրաց վերահսկիչ կետերը, մուտք են գործել Աբխազիայի եւ Հարավային Օսեթիայի տարածք: Կատարված փոփոխության համաձայն, վերոնշյալ նորմի խախտման դեպքում առաջին անգամ այն ընկալվում է որպես վարչական իրավախախտում եւ պատժվում է 400 լարի տուգանքով: Երկրորդ եւ հաջորդ խախտումների դեպքում այն ընկալվում է որպես քրեական հանցագործություն: Այդ դեպքում տուգանքը առնվազն կրկնապատկվում է կամ իրավախախտողը դատապարտվում է մեկ տարվա ազատազրկման:

Հիշեցնենք, որ գործող օրենսդրության համաձայն, սահմանված էր 2 հազար լարի տուգանք կամ՝ 2-4 տարվա ազատազրկում:

ԸՆՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՆԱԽԱԳԱՀՈՒԹՅԱՆ ԹԵԿՆԱԾՈՒՆԵՐԻ ԱՌԱՋԱԴՐՈՒՄԸ ՇԱՐՈՒՆԱԿՎՈՒՄ Է

«Ժողովրդական ժողով» հասարակական կազմակերպությունը Վրաստանի բնակչությանը կոչ է անում նախագահական ընտրություններին պաշտպանել Վրաստանի խորհրդարանի նախկին խոսնակ Նինո Բուրջանաձեի թեկնածությունը:

«Ժողովրդավարական շարժում-Միասնական Վրաստան» կուսակցության լիդեր Նինո Բուրջանաձեի թեկնածությունը պաշտոնապես առաջադրվեց «Ժողովրդական ժողովի» նախագահ Նինո Գափրինդաշվիլու կողմից: Կազմակերպությունը գտնում է, որ Նինո Բուրջանաձեն կարող է լինել Վրաստանի «արժանավոր նախագահ»: «Մենք գտնում ենք, որ Բուրջանաձեն նախագահության լավագույն թեկնածուն է, որն ունի բարձր մակարդակով քաղաքական գործունեության մեծ փորձ եւ օգտվում է բնակչության աջակցությունից»,- հայտարարեց Նինո Գափրինդաշվիլին:

Հիշեցնենք, որ 2013 թվականի հոկտեմբերին նախատեսված նախագահական ընտրությունների համար որպես թեկնածուներ արդեն առաջադրվել են Գիորգի Մարգվելաշվիլին՝ կառավարող «Վրացական երազանք» կոալիցիայի կողմից, Շալվա Նաթելաշվիլին՝ Լեյբորիստական կուսակցության կողմից եւ ոչ կառավարական կազմակերպությունների թեկնածու Նեստան Կիրթաձեն:

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԱԽՈՐԴ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԴԱՏԱՊԱՐՏՄԱՆ ՊԱՀԱՆՋՈՎ ՄԻԱՎՈՐՎԵՑ 10 ՀԱԶԱՐ ՄԱՐԴ

Մայիսի 19-ին «Նախկին քաղբանտարկյալները մարդու իրավունքների համար» կազմակերպության նախաձեռնությամբ Թբիլիսիի Սպորտի պալատում անցկացվեց հավաք, որին մասնակցեց ավելի քան 15 հազար մարդ:

Հավաքի մասնակիցներն ընդունեցին բանաձեւ, որտեղ բարձրացվեց նախորդ կառավարության դատապարտման եւ արդարության իրական վերականգնման պահանջը:

Սպորտի պալատում հավաքվածներն անձնական տվյալների նշմամբ լրացրեցին հատուկ ձեւաթղթերը, որից հետո նրանցից յուրաքանչյուրը դարձավ նախորդ կառավարության օրոք տուժյալների գործերի ուսումնասիրության հանձնաժողովի անդամ: Ինչպես հայտարարեց կազմակերպության ղեկավար Նանա Կակաբաձեն, սույն կամավոր գրանցումից հետո տվյալները կտեղակայվեն համակարգչային բազայում, որից հետո անհրաժեշտության դեպքում, գրանցված անդամների հետ օպերատիվ կապ կպահպանվի:

Հավաքին կայացավ միջադեպ, երբ Սպորտի պալատում հայտնվեց «Ժողովրդավարական Վրաստան»-ի լիդեր Նինո Բուրջանաձեն: Նրա հայտնվելուն պես, նիստի մասնակիցներից մի կին՝ Դոդո Ցխվեդադզե Նինո Բուրջանաձեին մեղադրանքներ ներկայացրեց: Տիկնոջը ստիպողաբար դուրս բերեցին դահլիճից:

«Միասնական ազգային շարժում» նախագահական կուսակցության ղեկավարները համարում են, որ իրենց քննադատողներն օժտված չեն մարդու իրավունքների եւ օրինականության մասին դատողություններ անելու բարոյական իրավունքով:

«Համագումարի կազմակերպիչ Նանա Կակաբաձեի իրավասությունն այդ հարցերում սահմանափակ է նրանով, որ 1990-ականների սկզբին նա եղել է օրենքով գող Զաբա Իոսելիանու զինակիցը»,- հիշեցնում է «Միասնական ազգային շարժումից» խորհրդարանի անդամ Դավիթ Դարչիաշվիլին:



ՎՐԱՍՏԱՆԻ ՆԱԽԱԳԱՀԸ ՇՔԱՆՇԱՆ ՀԱՆՁՆԵՑ ԲԻԼ ՔԼԻՆԹՈՆԻՆ

Նախագահ Միխեիլ Սաակաշվիլին, աշխատանքային այցով գտնվելով ԱՄՆ-ում, Սուրբ Գիորգիի հաղթանակի շքանշան հանձնեց Միացյալ Նահանգների նախկին նախագահ Բիլ Քլինթոնին: Շքանշանը հանձնվեց երկկողմ հարաբերությունների ամրապնդման գործում Քլինթոնի ներդրած ավանդի եւ Վրաստանին հատուկ աջակցություն ցույց տալու համար:

Քլինթոնը Սաակաշվիլուն շնորհակալություն հայտնեց պարգեւի համար, նշելով, որ իր համար մեծ պատիվ է այդ շքանշանով պարգեւատրվելը:

ՎՆԱՍՎԱԾ ԴԱՍԱԳՐՔԵՐԻ ՀԱՄԱՐ ԿՎՃԱՐԵՆ ԾՆՈՂՆԵՐԸ

Ինչպես հայտարարել է Վրաստանի կրթության եւ գիտության նախարար Գիորգի Մարգվելաշվիլին, անվճար ստացած դասագրքերի վնասման համար աշակերտների ծնողները ստիպված կլինեն փոխհատուցել վնասը:

«Եթե երեխան վնասում է դասագիրքը եւ այն արդեն պիտանի չէ հաջորդ աշակերտի ուսուցման համար, ընտանիքը ստիպված է լինելու գնել նորը»,- հայտարարեց նախարարը: Սակայն, եթե գիրքը վնասվում է արտակարգ իրավիճակներում, ենթադրենք հրդեհի ժամանակ, ապա նախարարությունն ընդունում է անհատական որոշում եւ նվազեցնում ընտանիքի ծախսերը:

Նախարարի խոսքերով, անվճար դասագրքերը կտրվեն ոչ թե աշակերտներին, այլ դպրոցներին: «Աշակերտները դասագրքերը կստանան դպրոցում, տարվա վերջին կվերադարձնեն»,- հայտարարեց Գիորգի Մարգվելաշվիլին:

ԱՐՀՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ՔՆՆԱՐԿՈՒՄ ԵՆ ՆՈՐ ՕՐԻՆԱՆԱԽԱԳԻԾԸ

Վրաստանի արհմիությունների միավորման նախագահ Իրակլի Պետրիաշվիլին համարում է, որ աշխատանքային օրենսգրքի նախագիծը ավելի կամ պակաս չափով ընդունելի է: Նա ասել է, թե օրենսդրության մեջ կատարված ուղղումների արդյունքում գոյություն չեն ունենա կարճաժամկետ պայմանագրեր, իսկ 2,5 տարի անց աշխատողը կունենա անժամկետ պայմանագիր: Պետրիաշվիլին օրենքի համար դրական է համարում նաեւ արտաժամյա աշխատանքի վարձատրությունը: Ինչ վերաբերում է այլ հարցերին, ապա արհմիությունները դժգոհ են աշխատանքի անվտանգության, կանանց իրավունքների եւ գիշերային աշխատանքի վարձատրման կապակցությամբ: Պետրիաշվիլին հայտարարել է, որ եթե վերոնշյալի առումով աշխատողի մոտ ծագեն հիմնախնդիրներ, նա կարող է դիմել արհմիությանը եւ երաշխավորել է, որ ոչ ոք տվյալ հոդվածով ոչ մեկի չի կարող հեռացնել:

ՎՐԱՑԱԿԱՆ ԵՐԿԱԹՈՒՂՈՒ ՆԱԽԿԻՆ ՏՆՕՐԵՆԸ ՀԵՌԱԿԱ ԴԱՏԱՊԱՐՏՎԵՑ ԵՐԿԱՄՍՅԱ ԱԶԱՏԱԶՐԿՄԱՆ

Որպես կանխման միջոց Թբիլիսիի քաղաքային դատարանը երկու երկամսյա նախնական կալանք սահմանեց «Վրացական երկաթուղի» բաժնետիրական ընկերության նախկին գլխավոր տնօրեն Իրակլի Էզուգբաիային: Ինչպես նշեց վերջինիս փաստաբանը, Էզուգբաիան ներկայումս գտնվում է Մեծ Բրիտանիայում եւ մտադիր է վերադառնալ Վրաստան: Քաղաքային դատարանի որոշումը, փաստաբանի խոսքերով, կբողոքարկվի վճռաբեկ դատարանին:

Նշենք, որ նույն գործով մեղադրվող ընկերության յոթ աշխատակիցները դատարանի կողմից գրավով բաց թողնվեցին:

Վրաստանի ֆինանսների նախարարության քննչական ծառայությունը Էզուգբաիային մեղադրում է առանձնակի մեծ չափերով պետական միջոցների ծախսման եւ հափշտակման մեջ: Քննությամբ պարզվել է, որ ընկերության եւ «Վագոնաշինարարի» միջեւ 2008 թվականին ձեւակերպվել է հինգ պայմանագիր, ըստ որի, վրացական երկաթուղին մի վագոնի վերանորոգման համար վավերացրել է 25 հազար ԱՄՆ դոլարով ավելի գումար, քան դրա իրական շուկայական գինն էր: Այդպիսով, հասցրած վնասի չափը կազմել է 65 միլիոն լարի:

ԱՐՁԱԳԱՆՔ

ԱՆԿԱԽ ԱՄԵՆ ԻՆՉԻՑ, ԲՌՆՈՒԹՅՈՒՆԸ ԱՐԴԱՐԱՑՈՒՄ ՉՈՒՆԻ

(Սկիզբը՝ 1-ին էջում)

պատասխան»:

Վրաստանի վարչապետն իր հայտարարության մեջ նշում է. «Խաղաղ ժողովի եւ սեփական կարծիքն արտահայտելու իրավունքը կարեւորագույն են մեր ժողովրդավարության համար: Վրաստանի յուրաքանչյուր քաղաքացի լրիվ չափով եւ իրավահավասար օգտվում է այդ իրավունքից: Իրավունքների դեմ ուղղված բռնությունը, խտրականությունը եւ մյուս գործողություններն անթույլատրելի են եւ նման գործողություններ կատարած անձանց հետ կվարվեն օրենքի համապատասխան»:

Այցով ԱՄՆ-ում գտնվող **Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլին,** Թբիլիսիում մայիսի 17-ին կայացած իրադարձությունների կապակցությամբ, հայտարարեց. «Ես խիստ մտահոգված եմ Թբիլիսիի կենտրոնում տեղ գտած բռնության կապակցությամբ: Ինչ շարժառիթով էլ որ պայմանավորված լիներ բռնությունը, այն չի կարող լինել վրաց ժողովրդի նկարագիրը: Ես համաձայն չեմ այն բանի հետ, թե բռնությունը դարձավ շարքային ոստիկանների ինչ-որ գործողությունների հետեւանքը, եւ մեղքը պետք է դրվի նրանց վրա: Խոսքը վերաբերում է քաղաքական պատասխանատվությանը: Կառավարությունը չպետք է սահմանազատվի այն բանից, ինչ տեղի է ունենում»:

Անդրադառնալով մայիսի 17-ին Թբիլիսիում տեղի ունեցած իրադարձություններին, **Համայն Վրաստանի Կաթողիկոս-Պատրիարք Իլիա Երկրորդը** հայտարարեց. «Մենք բռնության դեմ ենք, սակայն դրա (ոչ ավանդական սեռական կողմնորոշման մարդկանց կյանքի) քարոզչությունը անթույլատրելի է: Դա մեղք է եւ ոչ մի կրոն այն չի պաշտպանի: Մենք պետք է գիտենանք, որ կարող ենք ցավել, սակայն մարդկանց անձնական կյանքում չմիջամտել: Հուսով եմ, որ ամեն ինչ կկարգավորվի»,- հայտարարեց Իլիա Երկրորդը:

Վրաստանի ժողովրդական պաշտպան Ուչա Նանուաշվիլին հայտարարել է, որ ոստիկանությունը չկարողացավ ձեռնարկել համապատասխան միջոցներ, որպեսզի սեռական փոքրամասնությունների ակտիվիստները եւ նրանց կողմնակիցները կարողանան անցկացնել ակցիա:

Մեկնաբանելով մայիսի 17-ին տեղի ունեցած միջադեպը, **Վրաստանի խորհրդարանի փոխխոսնակ Զվիադ Չիձիգուրին** հայտարարեց. «Բոլորը անձնական կյանքի իրավունք ունեն, սակայն չի կարելի դա ցուցադրել: Ես երեխաներ ունեմ եւ նման ակցիան խախտում է մեծամասնության իրավունքը, երբ նրանք դուրս են գալիս եւ ցուցադրում են այն, որ իրենք հոմոսեքսուալիստներ եւ «ուժեղ» տղաներ են: Ինձ համար դա անընդունելի է»:

Ռուսթավելու վրա տեղի ունեցած միջադեպը խստորեն դատապարտում են կառավարությունն ու խորհրդարանական մեծամասնությունը: **Պատգամավոր Թինա Խիդաշելու** խոսքերով, նման ոչինչ չէր կարող պատահել այն երկրում, որը քաղաքակրթության հավակնություններ ունի: Խիդաշելու խոսքերով, Վրաստանի ՆԳ նախարարությունը ողջ աշխարհին ցույց տվեց, որ երկիրն ունի քաղաքակիրթ ոստիկանություն, որը մի կողմից կարող է լինել քաղաքակիրթ, իսկ մյուս կողմից՝ խուսափվել քաղաքացիների նկատմամբ հաշվեհարդարից:

Վրաստանի կրթության եւ գիտության փոխնախարար Դավիթ Զուրաբիշվիլու խոսքերով, տեղի ունեցածը լրիվությամբ համապատասխանում է սեւ վերնաշապիկների կողմից իրականացված ավերումներին: Նրա խոսքերով, բռնություն գործադրողներն անպայման պետք է պատժվեն: «Սա լուրջ հարված է երկրի միջազգային հեղինակությանը»,- հայտարարեց Զուրաբիշվիլին:

Եվրամիության անդամ երկրների Վրաստանում հավատարմագրված դեսպանները զարմանք են հայտնել այն բռնության առիթով, որ տեղ գտավ սեռական փոքրամասնության դեմ ակցիայի ժամանակ: Այս մասին ասվում է համատեղ հայտարարության մեջ:

«Արտահայտվելու ազատությունը մարդու հիմնական իրավունքն է, որը պետք է մատչելի լինի բոլորին: Շատ ափսոս, որ խաղաղ ցույցը հարուցեց բռնի դիմադրություն՝ մյուս ակցիայի կողմնակիցների կողմից: Բոլորն ունեն իրենց կարծիքը հայտնելու իրավունք: Մյուսների ապրելակերպի եւ մտքերի նկատմամբ հանդուրժողականությունը եվրոպական եւ միջազգային արժեքների հիմքն է»,- ասվում է հայտարարության մեջ:

Փիլիսոփա Գիգա Զեդանիայի կարծիքով, յուրաքանչյուր մարդ, ով ցանկանում է Վրաստանը տեսնել որպես արեւմտյան տիպի երկիր, պետք է լրջորեն մտահոգվի:

«Կրոնական ֆունդամենտալիզմը՝ այդպիսի «հաղթանակից» հետո, տրամաբանության բոլոր նորմաների համաձայն, կփորձի վերահսկողության տակ վերցնել նաեւ հասարակական կյանքի մյուս ոլորտները: Կառավարությունը, ընդդիմությունը, քաղաքացիական հասարակությունը, ԶԼՄ-ները, համալսարանները կամ, նվազագույնս, արեւմտամետ կողմնորոշմամբ մարդիկ պետք է ամենայն լրջությամբ խորհրդածեն, թե ինչպես կարելի է կանգնեցնել այդ գործընթացը»,- ֆեյսբուքում գրում է Զեդանիան:

Վրաստանի մի խումբ քաղաքացիներ հատուկ ուղերձ են հղել Վրաստանի նախագահ Միխեիլ Սաակաշվիլուն, վարչապետ Բիձինա Իվանիշվիլուն եւ խորհրդարանի նախագահ Դավիթ Ուսուփաշվիլուն՝ խնդրելով համապատասխանորեն գնահատել մայիսի 17-ին Թբիլիսիում տեղ գտած իրադարձությունները:

ՅՈՒՐԻ ԽՈՐԵՆՅԱՆ

ՄԱԿՐՈԷԿՈՆՈՄԻԿԱ

ԺՈՂՈՎՐԴԻ ՁԱՅՆԸ

Երկրում արդիական ենթակառուցվածքի շինարարության համար նախորդ իշխանության ծախսած ջանքերն ու միջոցները չբերեցին ակնկալվող քաղաքական շահաբաժիններ, ուստի, չնայած ակնհայտ առաջադիմությանն այդ ոլորտներում, դրանք կարող են համարվել քաղաքական տեսակետից տանուլ տված քայլ: Ինչպես հայտնի է, ժողովրդի ձայնը Աստծու ձայնն է: Ահա թե ինչու, եթե դուք նույնիսկ չեք ապրում Վրաստանում, ձեզ, հավանաբար, հետաքրքիր կլինի տեղյակ լինել, թե այդ երկրի բնակիչներն ինչ են մտածում՝ ոչ թե մեծ քաղաքականության կամ էկոնոմիկայի մասին, այլ առօրյա կյանքի մասին: Այդ առումով չափազանց հետաքրքիր է վերլուծել Ազգային դեմոկրատական ինստիտուտի անցկացրած ուսումնասիրությունները:

ԲԱՐԵՓՈԽՈՒՄՆԵՐԻՑ ԴԺԳՈՀՆԵՐԸ

Եվ այսպես, այն գլխավոր հարցը, որ առաջացրեց Վրաստանի բնակիչների, տվյալ դեպքում մայրաքաղաքի բնակիչների բացասական արձագանքը, այն էր, որ աղբի դուրսբերման համար սպասարկումների վարձատրությունը կապվեց ծախսած էլեկտրաէներգիայի հետ: Թբիլիսիի քաղաքապետարանի որոշման համաձայն, 2011 թվականի ամռանից սկսած, ծախսած յուրաքանչյուր 1 կիլովատ էլեկտրաէներգիային ավելանում է 5 թեթրի աղբը դուրս բերելու համար: Տվյալ որոշման արդյունքը եղավ այն, որ աղբի դուրսբերման հաշվին դրամական մուտքը կրկնապատկվեց, 21 միլիոն լարիից հասավ 45 միլիոն լարիի: Սակայն այդ որոշման քաղաքական հետեւանքներն աղետաբեր եղան այն ժամանակվա կառավարող կուսակցության համար: 2012 թվականի փետրվարին Թբիլիսիի բնակչության 94 տոկոսը համարում էր, որ այդ ոլորտում դրությունը խիստ վատթարացավ 2008 թվականի համեմատությամբ, 3 տոկոսը գտնում է, որ դրությունը չի փոխվել եւ միայն 1 տոկոսն է ենթադրել, որ դրությունը բարելավվել է: Նոյեմբերին դժգոհների թիվը մի փոքր նվազեց, սակայն շարունակում էր կազմել շատ մեծ թիվ. 88 տոկոս, միայն 11 տոկոսն է գտնում, որ ոչինչ չի փոխվել եւ դարձյալ 1 տոկոսն է ընդունում, որ իրավիճակը փոխվել է դեպի լավը: Թվերն ինքնին խոսուն են՝ տվյալ սակագնի արմատավորումը եղավ Ազգային շարժման եւ, կոնկրետ, Թբիլիսիի քաղաքապետարանի շատ ծանր քաղաքական սխալը. քաղաքապետարանը չկարողացավ գտնել մայրաքաղաքում թափոնքի օգտագործման ձեւ եւ հիմնախնդիրը լուծեց գների մեխանիկական բարձրացման միջոցով:

Եթե աղբի դուրսբերումը կապվեց սպառված էլեկտրաէներգիայի հետ, եւ այդ հարցը ավելի կամ պակաս չափով պարզ է, ապա կոմունալ վճարումների աճի հարցը բնավ միանշանակ չէ: Փետրվարին հարցվածների 56 տոկոսը համարում էր, որ կոմունալ վճարումներին առնչված իրավիճակը 2008 թվականի համեմատությամբ վատթարացել է, 30 տոկոսը ենթադրում էր, որ ոչ մի փոփոխություն տեղի չի ունեցել, իսկ 7 տոկոսը գտնում էր, որ տվյալ իրավիճակը փոխվել է դեպի լավը: Նոյեմբերին արդեն 51 տոկոսը համարում էր, որ կոմունալ վճարումների իրավիճակը փոխվել է դեպի վատը, սակայն նվազեց նրանց թիվը, ովքեր ընդունում էին, որ այն դարձել էր ավելի լավ: Այստեղ հարկ է հաշվի առնել այն, ոչ նվազ կարեւոր հանգամանքը, որ սկսած 2008 թվականից կոմունալ սպասարկումների գները, բացառությամբ էլեկտրաէներգիան աղբի հետ կապելուց, գործնականում չեն փոխվել: Այսպիսով, խոսքը ավելի շուտ վերաբերում է բնակչության եկամուտներին, որոնց չափից կախված է կոմունալ վճարումների մեծության ընկալումը:

Հետաքրքիր է հանրային տրանսպորտով ուղեւորության արժեքի նկատմամբ վերաբերմունքի դինամիկան: Եթե փետրվարին բնակչության 64 տոկոսը գտնում էր, որ 2008 թվականի համեմատությամբ դրությունը վատթարացել է, ապա նոյեմբերին այդպիսի կարծիք ուներ միայն 51 տոկոսը: Հասկանալի է, որ փոփոխությունները կապված են հանրային տրանսպորտում գների վերջին բարձրացման ժամանակի հետ: Իհարկե, փետրվարյան դժգոհության պատճառը դարձյալ եղան քաղաքապետարանի գործողությունները, որը 2011 թվականի հուլիսին որոշեց բարեփոխել քաղաքային տրանսպորտի համակարգը: Քաղաքապետարանը կազմակերպեց մրցույթ: Դրա արդյունքում ստեղծվեց «Թբիլիսիի երթուղային տաքսի» տրանսպորտային ընկերությունը, որի հիմնադիրներ դարձան մրցույթում հաղթած չորս ընկերություններ: Հաղթողները ստանձնեցին պարտավորություն՝ մինչեւ 2012 թվականի հունվարը բոլոր երթուղային ավտոբուսները փոխել նորերով, ինչպես նաեւ աշխատանքի տեղավորել բոլոր այն վարորդներին, ովքեր աշխատում են ուղերթերում:

Թվում է, թե առանձնապես ոչինչ չի պատահել: Սակայն հիմնախնդիրն այն է, որ մրցակցությունից խուսափելու նպատակով մունիցիպալիտետը պահանջեց գները բարձրացնել բոլոր ուղերթերում, նույնիսկ այնտեղ, ուր աշխատում էին հին ավտոբուսներ: Ինչպես այն ժամանակ գրում էին սոցիալական ցանցերում, տվյալ որոշման կատարման վերահսկողությունը հանձնարարվել էր պարեկին եւ նվազագույն տուգանքը կազմում էր 100 լարի: Իրականում ամե'ն ինչ չէր այդպես: Պարզապես առանց վճարի բարձրացման՝ ընկերությունները չէին տալիս ուղեթերթեր, իսկ ուղեթերթի բացակայությունը իրոք պատժվում էր տուգանքով՝ 100 լարի: Արդյունքում՝ ամբողջ երկրում դժգոհ քաղաքացիների թիվը հասավ 64 տոկոսի: Քաղաքային ավտոտրանսպորտի համակարգի բարեփոխումների արդյունքում, Թբիլիսին ազատվեց մեծ քանակությամբ հին ու անհարմար երթուղային տաքսիներից, բայց մեծացավ դժգոհ բնակչության թվաքանակը:

ԱՆՏԵՍԱՆԵԼԻ ԱՌԱՋԱԴԻՄՈՒԹՅՈՒՆ

Քաղաքացիները մի ոլորտում իրոք տեսնում են առաջադիմություն՝ այն է՝ ճանապարհային ենթակառուցվածքի բարելավումը: Ճիշտ է, այստեղ էլ մենք հանդիպում ենք հակասական տվյալների: Այսպես, 2012 թվականի փետրվարին հարցվածների 71 տոկոսը գտնում էր, որ 2008 թվականի համեմատությամբ ճանապարհներն էականորեն բարելավվել են: Իսկ դեկտեմբերին նրանց թիվը, ովքեր համարում էին վերոնշյալ ձեւով, նվազեց ու դարձավ 57 տոկոս: Տարօրինակությունը բացատրվում է նրանով, որ բնակչությունը ճանապարհների բարելավումն ընկալեց որպես բնական երեւույթ եւ արդեն գործնականում չի նկատում առաջադիմություն: Դա բխում է նրանից, որ ընդհանրապես լավը ավելի արագ է սովորական դառնում: Բացի դրանից, ճանապարհային ենթակառուցվածքի բարելավման ճանաչումը շատերի համար դարձավ ինչ-որ քաղաքական ինդիկատոր: Արտահայտությունը՝ «Ինչ է, մենք ասֆա՞լտ պետք է ուտենք»՝ Վրաստանում քաջածանոթ է «Միասնական ազգային շարժման» կառավարման առաջին տարիներից, որը ձեռնամուխ եղավ չափազանց բարձիթողի վիճակում գտնվող ճանապարհային ենթակառուցվածքի բարելավմանը եւ դրանից առանձնակի քաղաքական դիվիդենդներ չստացավ:

Նույնանման վիճակ է գազի մատակարարման ասպարեզում: Գազիֆիկացման կառավարական ծրագրի համաձայն, գազ սկսեցին անցկացնել ոչ միայն շրջկենտրոններում, այլեւ հեռավոր գյուղերում: Իհարկե, մինչեւ Վրաստանի լրիվ գազիֆիկացումը դեռեւս հեռու է, բայց դժվար է չնկատել այդ ուղղությամբ առաջադիմությունը: Նախընտրական ժամանակաշրջանում անցկացված գազիֆիկացման՝ հիրավի շատ բարձր տեմպերի ֆոնի վրա բարելավումն ընդունողների թվի կրճատումը բացատրվում է միայն հարցվածների քաղաքական նախապատվություններով, ովքեր սկզբունքորեն չէին ցանկանում տեսնել այն դրականը, ինչ արվել էր նախկին իշխանության կառավարման ութ տարվա ընթացքում:

Խզումն է'լ ավելի մեծ է նրանց թվում, ովքեր դրականորեն են գնահատում Վրաստանում 2008 թվականից սկսած ջրամատակարարման համակարգում կատարված փոփոխությունները: Եթե փետրվարին հարցվածների 32 տոկոսը համարում էր, որ տվյալ հարցում առաջադիմությունն առկա է, ապա նոյեմբերին երախտագետ քաղաքացիների թիվը հանկարծ կրճատվեց եւ դարձավ 20 տոկոս, իսկ մեծամասնությունը, այսինքն՝ 58 տոկոսը համարեց, որ 2008 թվականից սկսած, Վրաստանում ջրամատակարարման համակարգը ոչ մի փոփոխությունների չի ենթարկվել: Նման իրավիճակ է նաեւ կոյուղու համակարգի բարելավման հարցում:

Բացարձակապես հնարավոր չէ հավատալ, որ մարդիկ ահաբեկված էին եւ երկյուղ էին կրում պատասխանելու այն հարցերին, որոնք վերաբերում էին կոյուղուն, գազամատակարարմանը, ճանապարհներին, ջրմուղուն կամ աղբին: Այսպիսով, խոսքը վերաբերում է հասարակական կարծիքի դասական համահարաբերակցությանը՝ կապված երկրում քաղաքական իրավիճակի փոփոխման հետ: Երկրում արդիական ենթակառուցվածքի շինարարության համար նախորդ իշխանության ծախսած ջանքերն ու միջոցները չտվեցին ակնկալվող քաղաքական շահաբաժիններ, ուստի, չնայած ակնհայտ առաջադիմությանը, այդ ոլորտներում, կարելի է վերոնշյալ ջանքերն ու միջոցները համարել քաղաքական առումով տանուլ տված քայլ:

Է'լ ավելի հետաքրքիր է բնակչության վերաբերմունքը բժշկական սպասարկման նկատմամբ: Փետրվարյան հարցման ընթացքում տվյալ կետը բացակայում էր, ուստի ոչինչ չի կարելի համեմատել: Սակայն լավ հայտնի փաստ է, որ 2011-2012 թվականներին Վրաստանի բոլոր շրջանային կենտրոններում երեւան եկան ժամանակակից բժշկական կենտրոններ, ինչպես նաեւ շեշտակիորեն բարձրացավ պետական ապահովագրության փաթեթից օգտվողների թիվը: Եվ, այդուհանդերձ, միայն 12 տոկոսն է համարում, որ 2008 թվականի համեմատությամբ տեղերում բժշկության բնագավառում դրությունը բարելավվել է:

Այդուհանդերձ, ինչ էլ որ ասեն, ժողովրդի ձայնը Աստծու ձայնն է՝ առնվազն քաղաքագետների համար: Եվ նոր իշխանությունը, յուրաքանչյուր դեպքում, պետք է հաշվի առնի այն իրողությունը, որի առջեւ հայտնվել էր հին իշխանությունը: Տրամաբանորեն կլինի ենթադրել, որ նոր իշխանությունն այդ ամենից կհանգի համապատասխան եզրակացությունների: Իսկ այն, թե ինչպիսիք կլինեն այդ եզրակացությունները, ցույց կտա ժամանակը:

ԳԵԼԱ ՎԱՍԱՉԵ

«Business Time Georgia» հանդես